



Տարեկան գինն է . . . 120 շաշ
Վեցամսեայ . . . 65
Եռամսեայ . . . 35
Եւ ինչ ծանուցումը տողին 40 փարս է :
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները առնաւանդ 1 ին
նա 16 թն կը սկսին :

Գուրդա երկնայի լուսնի տեսնում ճամբուն
ճակերը ամեն մէկ թիւին համար 20
փարս է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ
եւ ինչ գրութիւն, իմաստը պիտի
ուղղուի . եւ ամեն ճամբուն ճակ
քը իրկողն վայ է :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈՍՏԱՆԻՆԻՍԻՆԻՍ 17 ՆՈՅԵՄԲԵՐ

ՌԵԴԱԿՏՈՐԱՆ ԵՒ ՏԵԽՆԻԿԱՆ
ԵՒ ՏԵԽՆԻԿԱՆ

ՌԵԴԱԿՏՈՐԱՆ ԵՒ ՏԵԽՆԻԿԱՆ
ԵՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Օրինակները եկողները եւ անոր պաշտօնականները Ռուսիոյ կայսեր ձեռքը կառավարութեան գործիք մըն են :

Պայտը՝ ոչ միայն աշխարհական իշխանութեան գլուխ է, այլ եւ հոգեւորական իշխանութեան եւ եկեղեցւոյ ալ գլուխն է : Թագաւոր եւ Պապէս միանալով :

Պետրոս Վ. կայսեր օրէն առաջ ուսական օրինակները եկեղեցին Պապի օրինակէն կամ Պատրիարքի օրինակէն իրեն գլուխը եւ անոր ձեռքը կը կառավարվի : Բայց Պետրոս Վ. ին բացարձակ իշխանաւորութիւնը չկրցաւ հանդուրժել, որ իր տէրութեանը մէջ իր դիմացը՝ ուրիշ իշխանութիւն մը գտնուի որ ժողովրդական խղճմանը իշխէ, պատրիարքութիւնը վերցուց, ու ինք զինքը եկեղեցւոյ գլուխ անուանելով, իր նախագահութեան տակը Սինոդ կամ հոգեւորական ժողով մը սահմանեց :

Նախադրութեան արժանի է կարգաւ Պետրոս Վ. կայսեր հրովարտական հետեւեալ հատուածը, որով այս յափշտակութիւնը կը ջանայ արգարաւորներու :

« Ժողովք մը ձեռքով ներկայացած հոգեւորական իշխանութիւն մը՝ չկրար բնաւ աշխարհական եւ վերջականը գրգռել երկրին մէջ որչափ եկեղեցական կարգէ յատուկ գլուխ մը :

Ռամիլ ժողովրդը չհասկնար հոգեւորին եւ աշխարհական թագաւորի իշխանութիւնները : Տեսնելով զերազայն Լուսինն օրով կարգէ գործը պատիւները եւ արանշատով, կրնայ հաւատալ թէ եկեղեցւոյ գլուխը ուրիշ անձի սկիզբն է, որուն իշխանութիւնը հաւատարմ եւ միջնաւ անգամ վերադառնալով եւս թագաւորին իշխանութեանը :

Բակեց զատ կրնայ կարծել, թէ եկեղեցական կարգը աշխարհական միապետութեան նման ինքնակաշարք ունի : Եւ ինչպէս թագաւորն ուրիշ տեսակ միապետութիւն մը եւ չափ ըլլայ : Արդ, որովհետեւ անհայտաւոր է, որ Ռամիլն այս խորհրդածութիւնները կրնայ ընել, ինչ չծաղիկ տակէ, թէ որ փառասեր կրնայ մը անհրաւ մէկ վեճը տար հետ միաբանի հըրդեհը բողբոջելու համար :

Եւս այսպէս Պետրոս Վ. կայսրը պատրիարքական իշխանութիւնը վերջնելով՝ եկեղեցին իր իշխանութեանը տակը առաւ, եւ մինչեւ այսօր իր յաջորդները եկեղեցին կը կառավարեն՝ ինչպէս իրենց զօրաց բանակներն ու ստորակները : Պայտը այսօրուան օրս ծնեալ գլուխ ու նախագահն է հոգեւոր ժողովքին, որուն

աշխարհի փոխանորդ կարգած է իր կողմէն տէրութեան երեք մետրապօլիտներէն մէկը : Ժողովքն անգամներ որ հինգ եկեղեցական են, կայսրէն կ'ընտրվին ու ամենքն ալ հաղանդութեան ու հաւատարմութեան երգում կուտան անոր : Եւ որովհետեւ կայսրը չկրնար միանգամայն աշխարհական եւ հոգեւոր իշխանութեան գործերուն զեղծել, իրեն երեսփոխան կարգած է հոգեւոր ժողովքն մէջ, իր բանակի օգնական եւ հիծեալ զօրաց հարմարատար Բրոթօզով զօրապետը՝ որ միայն իշխանութիւն ունի առաջարկելու եւ քննելու եկեղեցական կանոններն ու կարգադրութիւնները : Ժողովականները կարող չեն անոր խօսքին հակառակելու կամ անոր տուած վճիռը փոփոխելու . եւ մինչեւ հիմա չէ տեսնուած այսպիսի հակառակութիւն մը : Ուստի այսօրուան օրս Բրոթօզով զօրապետը Ռուսիոյ եկեղեցականները զօրաց գլուխն է մը պէս կը իր հաղանդութեամբ իր հրամանին տակ կը կառավարէ :

Եւս կերպով կրօնի պաշտօնականները՝ փոխանակ իրենց սուրբ կոչմանը համեմատ աւետարանին եւ եկեղեցւոյ պատուիրանացը գործարքի ու աւանդապահ ըլլալու, կայսեր ամեն անհրաժեշտութեանց ու հրամանին գերի եղած են, եւ հետեւաբար քրիստոնէական կրօնը իր փոքրէն մեծագոյն խառնուրդն ու հեռացել է :

« Եւս երկրի մէջ ուր քրիստոնէական հաւատքն իր բարեբար լոյսը տարածեց, կ'ըսէ երեւելի հեղինակ մը, բարեբարութիւնը քիչ քիչ մարեցաւ, եւ աւելի քաղցր ու պարկեշտ բարոյ տեսլի տուաւ : Ռուսիոյ մէջ ասոր հակառակն է : Եւս անհրաժեշտ բարեբարութիւն մը հոս հաւատաւ կեցած կը տեսնուի ինչ ինչ Եւստուծոյ կրօնքին անուանով, եւ իր պաշտօնականներուն ձեռքը : Բնականաւ միջակի անհաւատարմութիւնը մինչեւ քրիստոսի խաչին եւ սեղաններուն առջեւ կը տեսնուի :

Ռուս կղերք՝ Եւստուծոյ եւ սուրբ Եւստորանին օրինաց եւ ոչ մէկուն կը չպատկի : Խորատել վարդապետը եւ Եւստուծոյ օրէնքներն ուսուցանելը իրեն գործը չէ : Օւրիկ այն սուրբ իշխանութիւնն է, որ աշխարհական օրինաց եւ կայսրի մէջ մտնելով՝ օրինաց խտուրտութիւնը մեղմեցնելու կաշխատի : Ռուսիոյ մէջ անհրաժեշտ չէ քահանայ մը որ դատաւարական համար միջնորդութիւն ընելով՝ շտրկ խնդրէ : Բնականաւ ծառայական գործիք մըն է կառավարութեան կամեցը, եւ զեղացի ժողովրդոց պէս անարգ ստրկութեան վարժարան է : Կառավարութիւնը ամենեւին փոյթ չունի իր կղերին բարոյական վեճակը լուսը :

« Եւս » գիտութեան լոյսը անոր մէջ տալածելով՝ քիչ հակառակի կը ջանայ հընար եղածին չափ աւելի խաւար տգիտութեան մէջ պահելու, որպէս զնաւիկն ապահովութեամբ իշխէ :

Ցաւալի է խոստովանելու, բայց ռուս կղերքն ոչ գիտութիւն ունի եւ ոչ վարք : Եւստուծոյ, թանձրաբարոյ եւ մոլէ է . կը բռնական զգացմունքը եւ բարձր բարոյականի բերմունքը կը պակսի իրեն : Եւրոպէ իր քահանայական պաշտօնը իմաստութեան եւ ամենապարզ ուղղութեան կանոններուն համեմատ չկատարի : Մէկուն խղճմանը չառաջնորդել, վասն զի այն համոզարար կենդանի հաւատքովը վառեալ չէ : Տառապիլաց համար հոգ չունի, ակարութեան չօգնի, թընուառութեան միջոցով եւ սփոփիլ չէ . ոչ արտաքին կը չարցնէ, ոչ սրտի լէք մը կը գոցէ եւ ոչ հոգեւոր հիւանդութիւն մը կը բժշկէ . վասն զի միջոցաւորութիւն եւ յոյս չունի վրտակրտնութիւն ու տառապիլաց մատակարարելու : Զնառեղ ամենեւին միջոցութիւն մը ուղղելու, եւ ոչ մէկուն կը համար կ'աղօթէ, վասն զի մէկը իրեն չգիտէ :

Իր կեանքը անգործութեան ու տղիտութեան մէջ կանցնէ : Եւս ատենական թանձրաբարոյ է, որ ինքզինքը իրեն առջեւ յարկ ընելու օրէնքը չկրցար, որպէս զի ուրիշներուն առջեւ ալ յարգելի ու անհաճելի ըլլայ : Մէկ խօսքով, ռուս կղերքը աղօթելու համար կեցած չէ, երկնից արքայութեան համեմատ փափաքը չունի, որովհետեւ քահանայական պաշտօնը իրեն համար կ'ըլլայ մը չէ, այլ արհեստ մըն է ապրելու համար :

Մէկուն մը համար իմաստակարարութիւն չէ, ընտանեաց պատուոյն աւելցնել, զեղացիներուն պատուոյն աւելցնել չէ պայտը : Եւստուծոյ կրօնքն ու անոր զօրքը քահանայանքը, եւ մարդաստան ընտելութեանը գէտ . ինչու որ ինքն ալ հարցաւարտարող եւ հարստահարութեան գործիք է : Աղերին պարտքն է հոգեւոր մարմնով անձնանուէր ըլլալ իր հօտին : Ռուսիոյ մէջ կղերքն ոչ գութ ունի եւ ոչ անձնանուէրութիւն : Տեսնելով չէ երբեք, որ ռուս քահանայն անգեղջ եղնունագործ մը զղջման եւ տաքաւանաց բերելու աշխատի, եւ ոչ հիւանդներուն անկողնին քովը նստած միջոցաւ եւ համբուրութեան յորդորէ : »

Ռուս քարոզիչները զուրկ են այն դիւցազնական առաքինութիւնէն, որ հաւատոյ քարոզիչներուն միակ նկարագիրն է, որով ամեն նեղութիւն չարարանք եւ միջեւ անգամ մահ յանձն կառնուն սիրով եւ անտրտուն ճամբերութեամբ : Կառավարութիւնը հրաման կ'ընէ իրենց որ Ռուսիոյ զանազան գաւառներ

րուն մէջ եղած հեթանոսները քրիստոնէայ ընեն : Եւս հրամանը պարտաւոր են կատարելու, բայց ինչպէս եւ ինչպիսիք : Հետաքրքրութեան արժանի է դիտել : Քարոզիչները ճամբայ կ'ընեն հետերին քանի մը սայլ լեցուն ծխախոտ օղի եւ դրամ առած, եւ խաղախ ձիաւորներու ընկերութեամբ կը լինին Լաքիւնցիներուն, Սամոյկաներուն, Լաքիւնցիներուն, Սոկոլոնցիներուն, Բաւաւաւաւցիներուն եւ ուրիշ անկրօն կամ հեթանոս ժողովրդոց երկիրները : Վարձաւորութեան խոստովանելով զանոնք իրենց կը քաշեն, եւ փոխանակ Լեւտարանի անժուծկարութիւն կը քարոզեն : Եւս մէկ նորադարձի՝ չէ մը օղի, լիպրա մը ծխախոտ եւ մէկ ռուս (15 կամ 16 զուռուշ) կուտան : Ցարակոյս չկայ, որ այս պարզեւններուն կէսն անգամ արգելու ըլլայ նէ այս ժողովրդոց, ինչ որ ուղիս կը լինի, քրիստոնէայ ալ, հրեայ ալ, արեւելապաշտ ալ, ծառապաշտ ալ եւ այլն : Եւս համոզի վարդապետութեան ետեւ քարոզիչը՝ զանոնք գետնի մը կամ առուի մը մէջ կը խօթէ կը մկրտէ, մեծ խաչ մը համարելով կուտայ, կը քրիկ խաչ մըն ալ դերձանով պաշտօնողին կը կանչէ, եւ ահա Օրինակներ քրիստոնէայ եղան : Եւս այս եղանակով դեղին մէկը մկրտեց, բոլոր բնակիչները կ'սկսին իրենց պարգիւ առած օրէնքն ու ծխախոտները խմելու եւ ուշախոթութիւն ընելու : Քահանայները կ'ընեն ինքնապաշտ, զեղ մը, եւ հոս ալ նոյն կերպով եւ նոյն պատրուութեամբ կարծիք կ'ընէ առանց քրիստոնէական վարդապետութեան եւ հրահանգի : Եւս կարգաւ եւ ոչ զեղ կը սորվեցնէ այն վայրենիներուն, որպէս զի խորհրդածել չարովն, ըստ որում ժողովրդեան խորհրդածող ըլլալը իրենց բանին չգար :

Այլ լոյսիչալ քարոզարոս ժողովրդիները՝ այս կերպով մկրտվելն եւ Օրինակներ քրիստոնէայ ըլլալն ետեւ, օգնին ու ծխախոտին համը բերանին մնալով, կ'ընեն ուրիշ քարոզիչ մը մը փնտրելու, եւ նորէն մկրտվել կը խնդրեն, որպէս զի նորէն պարգիւ առնեն : Հազիւ կը գտնուի ստոյգ մէջ մէկ մարդ մը որ հինգ վեց անգամ այս կերպով մկրտված չըլլայ : Եւրոպի բաւ մը անգամ չեն գիտեր . բոլոր կ'ըստան ուսումնընին խաչ հանելու վրայ միայն կը կայանայ : »

ՊԵՏԻ ԼԱՐԵՆՈՒԹԻՒՆ :

Մեր գրականության հարստացման համար
Մ. Կ. Գ. Տարբեր

72 | Կ. ՊՕԼԻՍ . ՉԻՆԻԼԻ ԽԱՆ